

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ» ՆԿԱՏՄԱՄԲ 2019
ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս - էջ 3
2. Ամփոփագիր - էջ 4
3. Կատարողականի հաշվեքննության հաշվետվություն - էջ 7
4. Կատարողականի հաշվեքննության արդյունքներ - էջ 10
5. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր - էջ 16
6. Առաջարկություններ - էջ 19
7. Հավելվածներ - էջ 21

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 162-Ա (առաջադրանքի հաստատման մասին) և ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 213-Ա (առաջադրանքի ժամկետների երկարացման մասին) որոշումներ:

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Հաշվեքննության տեսակը

Կատարողականի

Հաշվեքննության առարկան

Արվեստների ծրագիր

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջան

2019 թվականի հունվարի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2020 թվականի սեպտեմբերի 22-ից 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ISSAI 100 և «ISSAI 300 ստանդարտների համաձայն:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագույանը:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ

Ա. Բախչագույան

2. Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

2.1 Ընդհանուր տեղեկատվություն

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018թ. հունիսի 11-ի թիվ 701-Լ, թիվ 703-Լ և թիվ 705-Լ որոշումներով հաստատվել են Հայաստանի Հանրապետության սպորտի և

երիտասարդության հարցերի նախարարության¹, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կանոնադրությունները:

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019թ. հունիսի 1-ի թիվ 661 որոշմանը, հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասը, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի մայիսի 8-ի ՀՕ-31-Ն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրությունը:

2.2 Հաշվեքննության նպատակը

ՀՀ հաշվեքննիչ պալատն իր 2020 թվականի տարեկան ծրագրի շրջանակներում գնահատել է Նախարարության «Արվեստների ծրագիր» ծրագրի (այսուհետ՝ ԾՐԱԳԻՐ) 2019 թվականի ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության իրագործման արդյունավետությունը:

2.3 Հաշվեքննության խնդիրները

Նախարարության Ծրագրերով նախատեսված դրամաշնորհի տրամադրման պայմանագրերով որպես պայմանագրերի առարկա է սահմանվել նախատեսված թատերական ներկայացումների բեմադրությունների իրականացումը, համերգային ծրագրերի ստեղծումը և իրականացումը, հանդիսատեսի սպասարկումը, ինչպես նաև կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները և այլ գործառույթները:

Հաշվեքննության խնդիրն է սահմանել հիշատակված գործառույթների իրականացման փաստագրումն ու արդյունավետության գնահատումը:

2.4 Հաշվեքննության շրջանակը

Հաշվեքննիչ պալատի կողմից կատարողականի հաշվեքննության շրջանակներում հաշվեքննվել են Նախարարության 2019թ. տարեկան գործունեության հետևյալ ենթածրագրերը՝

- «Օպերային և բալետային արվեստի ներկայացումներ» (ծրագիր-ծածկագիր՝ 1168-11001) (այսուհետ՝ Ծրագիր 1):

¹ ՀՀ Մշակույթի նախկին նախարարությունը միավորվել է ՀՀ գիտության և կրթության նախկին նախարարությանը 2019թ. հուլիսին:

- «Ազգային ակադեմիական թատերարվեստի ներկայացումներ» (ծրագիր-ծածկագիր՝ 1168-11002) (այսուհետ՝ Ծրագիր 2):
- «Թատերական ներկայացումներ» (ծրագիր-ծածկագիր՝ 1168-11003) (այսուհետ՝ Ծրագիր 3):
- «Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ» (ծրագիր-ծածկագիր՝ 1168-11004) (այսուհետ՝ Ծրագիր 4):
- «Մշակութային միջոցառումների իրականացում» (ծրագիր-ծածկագիր՝ 1168-11005) (այսուհետ՝ Ծրագիր 5):
- «Ազգային ակադեմիական խմբերգային համերգներ» (ծրագիր-ծածկագիր՝ 1168-11006) (այսուհետ՝ Ծրագիր 6, Ծրագիր 1-ից մինչև Ծրագիր 6-ը՝ այսուհետ՝ Ծրագրեր):

Նախարարության Ծրագրերի 2019թ. ամփոփ ֆինանսական ցուցանիշները ներկայացված են սույն եզրակացության 7-րդ գլխի Հավելված 1-ում:

Հաշվեքննության շրջանակներում ձևակերպվել է Նախարարության, մշակույթի և արվեստի կազմակերպությունների կողմից տնտեսման, ծախսային և նպատակային արդյունավետության գնահատումը՝ ելնելով հետևյալ հարցադրումներից՝

1. Արդյո՞ք հաշվեքննվող օբյեկտը տիրապետում է Ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությանը՝ իր կանոնադրական գործառույթների իրականացման համար:

2. Գնահատվում է արդյո՞ք Նախարարության մշակույթի և արվեստի Ծրագրերի յուրաքանչյուր կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունները որպես ելակետային տվյալներ, դիտարկելով համապատասխան կազմակերպության ոչ ֆինանսական ցուցանիշների կանխատեսվող և փաստացի մեծությունները, ինչպես նաև փաստացի ֆինանսավորման չափերը 2017-2019թթ. ժամանակահատվածում:

3. Հաշվեքննվող օբյեկտի ենթակայության արվեստի և մշակույթի կազմակերպությունների կադրային ռեսուրսների և վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունները որքանո՞վ են ապահովել ոլորտը կարգավորող կանոնադրական խնդիրների լուծումը:

2.5 Հաշվեքննության չափանիշները

Հաշվեքննիչ պալատը գնահատել է Նախարարության և Ծրագրերի գործառույթները՝ համադրելով դրանք ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի հետ:

2.6 Հաշվեքննության արդյունքում բացահայտված ամենաէական փաստերն ու դրանց ամփոփ նկարագրությունը

2.6.1 ՀՀ ֆինանսների նախարարության 2019թ. թիվ 254-Ն հրամանի և հաշվետվությունների «LSREP» համակարգից ստացված ոչ ֆինանսական և ամփոփ ֆինանսական ցուցանիշների տվյալների միջև առկա են անհամապատասխանություններ, իսկ Նախարարությունից ստացված տեղեկատվության մեջ առկա են ոչ ամբողջական, թերի կամ ընդամենագրերի սխալ արձանագրման դեպքեր:

2.6.2 Նախարարության 2017-2019 թթ. ամփոփ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների դինամիկայի վերլուծության արդյունքում առաջանում են ֆինանսական բացարձակ և հարաբերական ցուցանիշների համամասնությունների անհամապատասխանություններ:

2.6.3 Նախարարության ենթակա թվով երկու մշակույթի և արվեստի կազմակերպություններում արձանագրվել են գնումների գործընթացների մի շարք անհամապատասխանություններ:

2.6.4 Նախարարության ենթակա թվով 24 մշակույթի և արվեստի կազմակերպությունների թվով 638 աշխատակիցներ 2019թ. տարեկան ընդհանուր հաշվարկով 6452 աշխատանքային օրեր բացակայել են հանրապետությունից: Նրանց բացակայած օրերի համար հաշվարկվել է ընդամենը՝ 42,771,167.8 ՀՀ դրամ աշխատավարձ և կատարվել վճարումներ:

2.6.5 Նախարարության ենթակա մշակույթի և արվեստի կազմակերպությունների թվով 17 հաստիքային աշխատողներ 2019թ. միաժամանակ որպես հիմնական աշխատողներ ամբողջ դրույքով աշխատել են Ծրագրերում ընդգրկված երկու և ավելի տարբեր կառույցներում:

3. Կ Ա Տ Ա Ր Ո Ղ Ա Կ Ա Ն Ի Հ Ա Շ Վ Ե Ք Ն Ն ՈՒ Թ Յ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կատարողականի հաշվեքննության ընթացքում, ըստ հաշվեքննության առարկայի տնտեսման, նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքները գնահատելիս

առանձին սկզբունքները դիտարկելու փոխարեն ավելի նպատակահարմար է ընտրվել սկզբունքների միասնական մոտեցումը: Ըստ նշված մոդելի Նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն իրականացված հաշվեքննության արդյունքում ստացված փաստերի հիման վրա կատարվել են համապատասխան եզրահանգումներ:

3.1 Հաշվեքննության շրջանակներում առանձնացված առաջին հարցադրման մասով փաստվել է, որ Նախարարության կազմում գործող ժամանակակից արվեստների վարչության (այսուհետ՝ Վարչություն) կանոնադրությամբ սահմանված են մի շարք գործառույթներ: Դրանցից են՝ արվեստի և մշակութային կրթության ոլորտների պահպանման, զարգացման, տարածման և հանրահոշակման, նոր ծրագրերի և գաղափարների, ստեղծարար նախաձեռնությունների ապահովումը, հայեցակարգերի և պետական նպատակային ծրագրերի մշակումը, ՊՈԱԿ-ների ոչ ֆինանսական ցուցանիշների ու արտադրական գործունեության փաստաթղթային ուսումնասիրությունները և վերլուծությունները, դրանց տարեկան ստեղծագործական գործունեության հաշվետվությունների ուսումնասիրումն ու վերլուծությունը, եզրակացությունների կազմումը, Նախարարության կայքում տեղադրումը և այլն: Նշված գործառույթների իրականացման ապահովման համար պայմանագրով սահմանված են «Պատվիրատու»-ի իրավունքները՝ ցանկացած ժամանակ ստուգել «Կատարող»-ի կողմից պայմանագրի կատարման ընթացքը և որակը, «Կատարող»-ից պահանջելու ստանալ տեղեկույթ պայմանագրի կատարման ընթացքի մասին: Պայմանագրերով սահմանված են նաև Կատարողի պարտավորությունները, որոնցից են՝ «Պատվիրատու»-ի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին, ներկայացնել ֆինանսական և բովանդակային հաշվետվություն: Վարչության թվով 8 հաստիքային աշխատակիցներից 5-ը 2019թ. թափուր են եղել:

Նախարարության Վարչությունը նպատակային արդյունավետության տեսակետից չի տիրապետում այն տեղեկատվությանը, որն անհրաժեշտ է կանոնադրությամբ և պայմանագրերով վերոհիշյալ միջոցառումների համար սահմանված գործառույթների իրականացման մասով իրեն վերապահված խնդիրների լուծման համար (տես՝ սույն ընթացիկ եզրակացության 4-րդ գլխի 4.1, 4.2 և 4.3 ենթակետեր):

3.2 Հաշվեքննության շրջանակներում առանձնացված երկրորդ հարցադրման մասով փաստվել է, որ Ծրագրի 2017-2019թթ. ժամանակահատվածների շրջանակներում Նախարարությունը և Վարչությունը ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների գծով տեղեկատվությունների համադրումներ, համեմատություններ, վերլուծություններ և մոնիթորինգ չեն իրականացնում, ինչի արդյունքում չեն համընկնում ամփոփագրերի և ընդամենագրերի կտրվածքներով տարբեր շտեմարաններում առկա համասեռ տեղեկատվությունը, ինչպես նաև վերջիններիս սինթետիկ և անալիտիկ մակարդակներում

ծնավորվում են իրար հակասող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներ: Նախարարության ենթակայության թվով 27 արվեստի և մշակույթի հաստատությունների ոչ ֆինանսական, արդյունքային 2017-2019թթ. տարեկան ամփոփ չափորոշիչները ներկայացված են Հավելված 2-ում:

Ծրագրի շրջանակներում դիտարկված ժամանակահատվածների համադրությունների, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների միավորներին բաժին ընկնող վերլուծությունների արդյունքները, համեմատվող ժամանակահատվածների դինամիկայի համեմատությունները վկայում են, որ Նախարարությունը և Վարչությունը տարեկան կտրվածքներով ցուցանիշների ամփոփումներում, ընդհանրացումներում և կանխատեսումներում սահմանված գործառույթները բացակայում են (տես՝ սույն ընթացիկ եզրակացության 4-րդ գլխի 4.4, 4.5 և 4.6 ենթակետեր):

Կատարողականի հաշվեքննության ժամանակ վերը ներկայացված և վերլուծված ընդհանուր արվեստի և մշակույթի ոլորտի հանրապետական ցուցանիշների և ըստ առանձին կազմակերպությունների 2017–2019թթ. դինամիկայի չի իրականացվել՝ համապատասխան տեղեկատվության թերի լինելու կամ տրամադրման ժամկետների ուշացման պատճառով:

3.3 Հաշվեքննության շրջանակներում առանձնացված երրորդ հարցադրման մասով փաստվել է, որ Ծրագրում ընդգրկված արվեստի և մշակույթի ոլորտի աշխատակիցների մասով Նախարարությունը և Վարչությունը գործող իրավակարգավորումների շրջանակներում չեն վերահսկում իրենց կողմից հաստատված անձնակազմերի հաստիքացուցակների մասնագիտական գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև ամբողջ հաստիքով, որպես հիմնական աշխատողների տարբեր հաստատություններում միաժամանակյա ընդգրկվածությունը: Նախարարությունը և Վարչությունը չեն վերահսկում նաև հանրապետությունից որոշակի ժամանակահատվածով բացակայող աշխատակիցների համար հաշվարկվող և վճարվող աշխատավարձերը (տես՝ սույն ընթացիկ եզրակացության 4-րդ գլխի 4.7 և 4.8 ենթակետեր):, ինչպես նաև Ծրագրի՝ արվեստի և մշակույթի կազմակերպությունների կողմից իրականացվող գնումների ընթացակարգերը (տես՝ սույն ընթացիկ եզրակացության 5-րդ գլխի 5.1 և 5.2 կետեր):

3.4 Նախարարության Ծրագրի կատարողականի հաշվեքննության ընթացքում նպատակային և ծախսային արդյունավետության, ինչպես նաև տնտեսման գործառույթների գնահատման նպատակով ընտրանքային կարգով ուսումնասիրված թվով երկու արվեստի և մշակույթի կազմակերպությունների կողմից 2019թ. իրականացված գնումների գործընթացներում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ (տես՝ սույն ընթացիկ եզրակացության 5-րդ գլխի 5.1 և 5.2 ենթակետեր):

4. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

4.1 Կատարողականի հաշվեքննության համար անհրաժեշտ, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված և Նախարարության կողմից

2017-2019թթ. արվեստի և մշակույթի ոլորտին առնչվող ոչ ֆինանսական, արդյունքային ցուցանիշ-չափորոշիչների մասով ներկայացված տեղեկատվությունը ստացվել է նախատեսված ժամկետների ուշացումներով և պահանջներին ոչ համապատասխան, որոնց պատճառներով հնարավոր չի եղել ամբողջությամբ իրականացնել կատարողականի հաշվեքննությամբ սահմանված գործառույթները՝ համաձայն հաստատված առաջադրանքի: Մասնավորապես, գնահատել ըստ առանձին արվեստի և մշակույթի կազմակերպությունների կողմից իրականացվող «Ներկայացումների (համերգների) քանակ», «Հանդիսատեսի թվաքանակ», «Նոր ներկայացումների (նոր համերգային համարներ) քանակ» և «Դպրոցական ֆիլիարմոնիայի գործունեություն Երևանում, մարզերում, համերգ-դասախոսությունների քանակ» բաղադրիչների վերաբերյալ առկա տեղեկատվության, ըստ նախորդ ժամանակաշրջանների հետ դինամիկայի և համապատասխան ֆինանսավորման պայմաններում հնարավոր տնտեսման, նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքները գնահատելու համար: Նախարարության Ծրագրերի 2017-2019թթ ոչ ֆինանսական, արդյունքային չափորոշիչների մասով ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 3-ում:

Հաշվեքննվողի պարզաբանումը. «Բացը վերաբերվում է ՊՈԱԿ-ների հետ կնքվող պայմանագրերում ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների համադրման մեթոդաբանության բացակայությանը (KPI): Հիմնավորված չէ մշակութային միջոցառումների, հանդիսատեսի քանակության և դրա տակ դրված ֆինանսավորման չափի միջև կոռելյացիան, ըստ այդմ կազմակերպություններից պահանջվող ցուցանիշների (կանխատեսումների) քանակության խնդիրը բաց է մնում:»

4.2 Նախարարությունից ստացված տեղեկատվության մեջ առկա են ոչ ամբողջական, թերի կամ ընդամենագրերի սխալ արձանագրման դեպքեր, արվեստի և մշակույթի կազմակերպությունների հաստիքացուցակներում առկա են աշխատակիցների անհատական տվյալների, հանրային ծառայությունների համարանիշերի անճշտություններ (համադրման արդյունքներում չեն նույնականացվել ընդհանուր թվով 119 անձանց տվյալներ, իսկ «Հայաստանի սիմֆոնիկ նավագախումբ» ՊՈԱԿ-ը հրաժարվել է տեղեկատվության տրամադրումից), որոնց պատճառով հնարավոր չի եղել վերլուծել, համադրել, համեմատել և գնահատել ըստ առանձին կառույցների գործառույթների նպատակային և ծախսային արդյունավետությունը: Մասնավորապես, Նախարարության և արվեստի, մշակույթի հաստատությունների միջև կնքված դրամաշնորհի և սուբսիդիայի տրամադրման պայմանագրերով սահմանված «Կատարող»-ը պարտավոր էր «Պատվիրատու»-ին տրամադրել, իսկ «Պատվիրատու»-ն պարտավոր էր «Կատարող»-ից պատշաճ ձևով ու

կարգով ընդունել կանխատեսվող ցուցանիշների և դրանց կատարման վերաբերյալ պայմանագրերով սահմանված տեղեկատվությունը:

Հաշվեքննվողի պարզաբանումը. «ՊՈԱԿ-ների վարչակառավարչական և ֆինանսատնտեսական իրավակիրառ պրակտիկան առավելապես ստեղծագործակենտրոն է, որտեղ առաջնահերթ գերակայություն է տրվում ստեղծագործական գործընթացների լիարժեք և նպատակային օգտագործմանը, արվեստի ստեղծմանն ու հանրահոգակմանը: Կարծես երկրորդ պլան է մղված կազմակերպությունների գործունեության մեջ իրավական գործընթացների ճշգրտության ապահովման, գործող օրենսդրության տառին և ոգուն հավատարիմ մնալու հրամայականը: Իրավական որոշ գործընթացներ ակամա, դիտավորության բացակայությամբ մատնվում են անուշադրության: Սա ընդունելի չէ ոլորտային և աշխատանքային օրենսդրության իրավաչափ կիրարկման առումներով:»

4.3 Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 2019թ. թիվ 254-Ն հրամանի, հաշվետվությունների՝ «LSREP» համակարգից ստացված ոչ ֆինանսական տվյալների և Նախարարության կողմից տրամադրված ըստ արվեստի, մշակույթի կազմակերպությունների ներկայացրած ամփոփ արդյունքային ցուցանիշների ընդամենագրերի միջև առկա են անհամապատասխանություններ:

Հաշվեքննվողի պարզաբանումը. «Արձանագրությամբ բարձրացված խնդիրները մտահոգիչ են՝ կապված ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական բացթողումների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի ոչ պատշաճ վարման, ֆինանսական գործառնությունների թերացումների հետ: Սակայն իրավիճակի ուսումնասիրությունը փաստում է, որ տեղ գտած խնդիրների և թերացումների զգալի մասն ունեն օբյեկտիվ բացատրություններ՝ պայմանավորված օրենսդրական կարգավորումների լրամշակման և կատարելագործման անհրաժեշտության, ձևավորված իրավակիրառ պրակտիկայի, ոլորտային առանձնահատկությունների և անհրաժեշտ մասնագետների բացակայության հանգամանքներով: »

4.4 Նախարարության Ծրագրի 2017-2019թթ. ընդհանուր կատարողականի գնահատման նպատակով դիտարկվել են 2017-2019թթ. Նախարարության ենթակայության թվով 27 մշակույթի և արվեստի ոլորտի հաստատությունների տարեկան ֆինանսական ցուցանիշները և ոչ ֆինանսական, արդյունքային չափորոշիչները: Դիտարկված երկու ժամանակաշրջանների (2018-2017թթ. և 2019-2018թթ.) ֆինանսական ցուցանիշների վերլուծության արդյունքում ստացվում են համամասնությունների անհամապատասխանություններ (տես՝ Հավելված 2 և Հավելված 3):

Հաշվեքննվողի պարզաբանումը «Օրենսդրական հիմնական խնդիրը վերաբերում է ոլորտի առանձնահատկությամբ պայմանավորված կատարողական արվեստի բնագավառի (թատրոն, երաժշտություն, պար) աշխատողների աշխատաժամանակի տևողությանը: Այսպես, ինչը, մեր համոզմամբ, չի կարող գերազանցել շաբաթական 24 ժամը: Հարկ է նախատեսել արվեստի բնագավառի ստեղծագործական անձնակազմի աշխատողների աշխատանքային ռեժիմը կանոնակարգող առանձնահատուկ կարգավորումներ, ինչը պայմանավորված է դերասանների, երաժիշտների, երգիչների, պարողների ստեղծագործական աշխատանքի առանձնահատկություններով: Հոգևոր և էմոցիոնալ առումով նշված բնագավառի աշխատողների մասնագիտությունը պահանջում է ֆիզիկական և մտավոր (ձայն, մարմին, կենտրոնացում, հիշողություն) գերլարում: Հատուկ հուզականություն է պահանջում կերպարի հետ արտիստի հոգեմտավոր փոխհարաբերության խնդիրը:»:

4.5 Ըստ Նախարարության 2018-2017թթ.Ծրագրերի ֆինանսական տվյալներից և ոչ ֆինանսական ամփոփ չափորոշիչներից հաշվարկված հարաբերական երեք ցուցանիշների դիտարկմամբ պարզվել է, որ 2018թ-ին 2017թ-ի համեմատ Նախարարության Ծրագրերի տարեկան փաստացի ծախսերը նվազել են ընդհանուր 548,880.3 հազ. դրամով (5,507,501.4 – 6,056,384.7), ընդ որում՝

4.5.1 «Ներկայացումների (համերգների) քանակ» բաղադրիչի թվով 10 ներկայացման (համերգների) քանակի աճի (2106 - 2096) պայմաններում մեկ պայմանական ներկայացման (համերգների) միավորին բաժին ընկնող տարեկան միջին գումարը նվազել է 274.3 հազ. դրամով (2,615.1 – 2,889.5):

4.5.2 «Հանդիսատեսի թվաքանակ» բաղադրիչի թվով 43298 հանդիսատեսի թվաքանակի նվազման (691674 - 734972) պայմաններում մեկ պայմանական հանդիսատեսին բաժին ընկնող տարեկան միջին գումարը նվազել է 0.2 հազ. դրամով (8.0 – 8.2):

4.5.3 «Նոր ներկայացումների (նոր համերգային համարներ) քանակ» բաղադրիչի թվով 38 նոր ներկայացման (համերգների) քանակի աճի (118 - 80) պայմաններում մեկ պայմանական նոր ներկայացման (համերգների) միավորին բաժին ընկնող տարեկան միջին գումարը նվազել է 29,031.0 հազ. դրամով (46,673.7 – 75,704.8):

4.6 Ըստ Նախարարության 2019-2018թթ.Ծրագրերի ֆինանսական տվյալներից և ոչ ֆինանսական ամփոփ չափորոշիչներից հաշվարկված հարաբերական երեք ցուցանիշների դիտարկմամբ պարզվել է, որ 2019թ-ին 2018թ-ի համեմատ Նախարարության Ծրագրերի

տարեկան փաստացի ծախսերը նվազել են ընդամենը՝ 77,871.6 հազ. դրամով (5,429,629.8 – 5,507,501.4), ընդ որում՝

4.6.1 «Ներկայացումների (համերգների) քանակ» բաղադրիչի թվով 132 ներկայացման (համերգների) քանակի նվազման (1974 - 2106) պայմաններում մեկ պայմանական ներկայացման (համերգների) միավորին բաժին ընկնող տարեկան միջին գումարը աճել է 135.4 հազ. դրամով (2,750.6 – 2,615.1):

4.6.2 «Հանդիսատեսի թվաքանակ» բաղադրիչի թվով 20200 հանդիսատեսի թվաքանակի նվազման (674474 - 691674) պայմաններում մեկ պայմանական հանդիսատեսին բաժին ընկնող տարեկան միջին գումարը աճել է 0.1 հազ. դրամով (8.1 – 8.0):

4.6.3 «Նոր ներկայացումների (նոր համերգային համարներ) քանակ» բաղադրիչի թվով 21 նոր ներկայացման (համերգների) քանակի նվազման (97 - 118) պայմաններում մեկ պայմանական նոր ներկայացման (համերգների) միավորին բաժին ընկնող տարեկան միջին գումարը աճել է 9,301.8 հազ. դրամով (55,975.6 – 46,673.7):

Հաշվեքննվողի պարզաբանումը «Կատարողական արվեստի թատերահամերգային բնագավառում բեմական մասնագիտական գործունեությունը թե՛ փորձերի շրջանում, թե՛ ներակայցման և ելույթի պահին, ուղեկցվում է արտիստի էմոցիոնալ գերլարվածությամբ, բարձր հուզականությամբ, պայմանական միջավայրում առանձնահատուկ կահավորման պայմաններում գործունեության իրականացմամբ: Անկայուն լուսավորությունը (վառ և մեղմ լուսի հերթագայում), ձայնային տատանումները կամ թույլատրելի սահմանը գերազանցող ձայնը, բեմում ծխի և այլ բեմական հնարքների կիրառումը, անհարմար բեմական զգեստներն ու ծանր գրիմն աշխատանքը դարձնում են գերլարված: Անհրաժեշտ է նշված խնդիրների նպատակային և արդյունավետ լուծման, արվեստի բնագավառի լիարժեք և արգասաբեր զարգացման համար մշակել ոլորտի այնպիսի օրենսդրական կարգավորումներ, որոնք անհրաժեշտաբար հաշվի կառնեն արվեստագիտական գործունեության առանձնահատկությունները: Այս մասնագիտությունների ներկայացուցիչներն երբեմն կարող են ենթարկվել կյանքին և առողջությանը սպառնացող ռիսկերի ազդեցությանը (շարժական կամ անհարման դեկորներ և ռեքվիզիտ, բեմի դժվար հասանելի հատվածներում բեմադրված միզանսցեններ՝ բարձրունքում կամ շարժումները կաշկանդող դեկորներում):»:

4.7 Նախարարության Ծրագրում ըստ արվեստի և մշակույթի կազմակերպությունների կողմից տրամադրված տեղեկատվության և կատարված համադրումների արդյունքում պարզվել է, որ թվով 24 արվեստի և մշակույթի հաստատությունների թվով 638

աշխատակիցներ ըստ Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ՍԵԿՏ) և Նախարարության միասնական շտեմարանի (այսուհետ՝ Բազա) հետ համադրման արդյունքների՝ 2019թ-ին ավելի քան հինգ աշխատանքային օրերով² բացակայել են հանրապետությունից: Նշված աշխատակիցներին աշխատաժամանակի հաշվարկի համապատասխան ամիսների տեղեկագրերում (տաբելներ) արձանագրվել են ներկայությունները, հաշվարկվել է ընդամենը՝ 15,771,167.6 ՀՀ դրամ աշխատավարձ և կատարվել վճարումներ (տես՝ Հավելված 4):

Հաշվեքննվողի պարզաբանումը «ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից ուղարկված անհատական առանձնացված ուսումնասիրության հիման վրա կազմակերպություններից ստացվել են արձանագրության մեջ բարձրացված խնդիրների և հարցերի շուրջ գրավոր պարզաբանումներ և հիմնավորումներ: Պարոդի, երաժշտի, երգչի և դերասանի աշխատանքն իր հուզականությամբ և ծանրաբեռնվածությամբ պահանջում է կատարողի ֆիզիկական և մտավոր բոլոր ուժերի ակտիվացում, սթրեսների հանդեպ դիմադրողականություն, որը չի կարող անընդհատության ռեժիմով իրականացվել 8 աշխատանքային ժամերի ընթացքում: ՊՈԱԿ-ների տնօրենները պատրաստակամ են հատուցել իրենց կողմից չհիմնավորված բացթողումների հետևանքով գոյացած ֆինանսական վնասները»:

4.8 Նախարարության Ծրագրի թվով 17 հաստիքային աշխատակիցներ 2019թ. միաժամանակ որպես հիմնական աշխատողներ ամբողջ դրույքով աշխատել են Ծրագրերում ընդգրկված երկու և ավելի տարբեր արվեստի և մշակույթի կառույցներում (տես՝ Հավելված 5):

Հաշվեքննվողի պարզաբանումը «Վերհանված խնդիրների մեծ մասը վերաբերում է ստեղծագործական կազմակերպություններում տեխնիկական և օժանդակ սպասարկում իրականացնող մասնագետների (լուսաձայնային օպերատորներ, բեմական նկարիչներ, դիզայներներ) հրամանագրումներով (համատեղություն, գործուղումներ և այլն): Նշված մասնագիտությունները ներկայումս համարվում են խիստ պահանջարկված, նրանց բնականոն համալրման (բարձրագույն և միջին մասնագիտական հաստատություններում համապատասխան մասնագիտական ամբիոնների բացակայություն, ուսումնական և կրթական ծրագրերի բացակայություն և այլն): Գործընթացները բացակայում են կամ չեն լուծում անհրաժեշտ համալրման խնդիրները: Արդյունքում՝ ոլորտում գործում են խիստ սահմանափակ թվով որակյալ մասնագետներ, ինչը ցածր հաստիքային աշխատավարձերի

² Մինչև հինգ օրերով բացակայությունը հանվել է համադրման տվյալներից՝ հաշվի առնելով աշխատանքային օրերի հետ ոչ աշխատանքային և տոնական օրերի իրար հաջորդելով պայմանավորված հնարավոր համընկնումները:

պարագայում հարկադրոմ է կազմակերպություններին խնդրի լուծումը ապահովել համատեղություններով:»:

4.9 Ծրագիր 5-ում (մշակութային մրջոցառումներ, այդ թվում՝ թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կերպարվեստի, ճանաչողական-կրթական ծրագրերի, ազգային փոքրամասնությունների մշակույթի տարածման, մշակույթին նվիրված հեռուստահաղորդաշարերի և ներառական ծրագրերի իրականացում) ըստ աջակցությունների ուղղությունների և ըստ 2019թ. մրցույթներում հայտագրված և հաղթած կազմակերպությունների, Նախարարությունը և Վարչությունը առանձնացված հաշվառում չի վարում: 2019թ. տարեկան ֆինանսավորման 689,775.5 հազ. դրամի պայմաններում փաստացի ծախսը արձանագրվել է 603,075.3 հազ. դրամ՝ առաջացնելով 86,700.2 հազ. դրամի դեբիտորական պարտքեր (2017 և 2018թթ. հիշյալ գործընթացներն իրականացվել են առանց մրցույթների):

Հաշվեքննվողի պարզաբանումը «Ծրագիր 5-ը շարունակական բնույթ է կրում, երկրորդ կիսամյակի ընթացքում կնքված դրամաշնորհի պայմանագրերի վերջնաժամկետները հիմնականում ավարտվում են հաջորդ տարվա առաջին կիսամյակում, հետևաբար դեբիտորական պարտքերի առաջացումը պայմանավորված է վերոնշյալ հանգամանքով: Ծրագիր 5-ով կնքված պայմանագրերով սահմանված պատվիրատուին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալի մեծությամբ պայմանավորված հնարավոր չէ ներկայացնել էլեկտրոնային տարբերակով»:

Հաշվեքննողների մեկնաբանությունները Սույն ընթացիկ եզրակացությամբ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտն ըստ էության առարկություններ չի ներկայացրել, տրվել են բացատրություններ և պարզաբանումներ, որոնք կատարողականի հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանությունների բովանդակության հետ առընչություններ չունեն և հիմնականում վերաբերվում են մշակույթի և արվեստի ոլորտի օրենսդրական իրավակարգավորումներին:

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

Նախարարության Ծրագրի կատարողականի հաշվեքննության ընթացքում նպատակային և ծախսային արդյունավետության, ինչպես նաև տնտեսման գործառույթների գնահատման նպատակով ընտրանքային կարգով ուսումնասիրվել են թվով երկու արվեստի և մշակույթի կազմակերպությունների կողմից 2019թ. իրականացված գնումների գործընթացները, ըստ

որոնց ոլորտի կանոնադրություններով ձեռքբերումները, Նախարարության հետ կնքված դրամաշնորհի տրամադրման պայմանագրերով սահմանված պահանջների կատարման տեսանկյունից, չնայած հիմնականում համապատասխանում են նպատակային և ծախսային արդյունավետության ապահովման ընթացակարգերին, սակայն գնումների գործընթացներում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ:

5.1 «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ը 2019 թվականի ընթացքում իրականացրել է «Գնանշման հարցում» ընթացակարգով 192 չափաբաժիններով՝ 30,562.879,0 հազ. դրամ գումարի չափով և «Մեկ անձից գնում» գնման ընթացակարգով 100 չափաբաժիններով՝ 27,467.561,0 հազ. դրամ գումարի չափով կատարված գնումների գործընթացներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ.

5.1.1 «Գնանշման հարցում» ընթացակարգով, ԳՍԱԱԱԹ-ԳՀԱՊՁԲ-2019/5, ԳՍԱԱԱԹ-ԳՀԱՊՁԲ-2019/3, ԳՍԱԱԱԹ-ԳՀՇԾԲ-2019/4 և ԳՍԱԱԱԹ-ԳՀԱՇՁԲ-2019/1 ծածկագրերով կատարված գնման ընթացքում “Procurement.am” տեղեկագրում (այսուհետ՝ Տեղեկագիր) չի հրապարակվել «Կնքված պայմանագրի մասին» հայտարարությունը: Առկա է անհամապատասխանություն 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

5.1.2 Գնումների պլանում ընդգրկված, գնումների միասնական անվանացանկով սահմանված թվով 36 միջանցիկ ծածկագրեր չեն լրացվել 4-րդ մակարդակին համապատասխան: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում 1) հավելված 3-ի 2-րդ բաժնի 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների հետ:

5.1.3 «Մեկ անձից գնում» ընթացակարգով կատարված գնումների (բացառությամբ թվով 2 չափաբաժիններով կատարված գնումների «Կնքված պայմանագրի մասին» հայտարարությունները) վերաբերյալ ոչ մի տեղեկություն չի հրապարակվել Տեղեկագրում: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն (այսուհետ՝ Որոշում 2) որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

5.1.4 Բացակայում են գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը՝ մասնավորապես մասնակիցներին

ուղարկված հրավերները: Առկա են անհամապատասխանություններ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի և Որոշում 2-ի 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-ին ենթակետի պահանջների հետ:

5.1.5 ՊՈԱԿ-ը 2019 թվականի տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային և համացանցային ծառայությունների մասով գնում չի հայտարարվել, շարունակել է օգտվել ծառայություններից նախորդ տարիներին կնքված պայմանագրերի հիման վրա: Առկա են անհամապատասխանություններ Օրենքի 2-րդ հոդվածի 1-րդ մասի 1-ին կետի գ ենթակետի, 3-րդ և 4-րդ կետերի պահանջների հետ:

5.2 «Հովհ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2019 թվականի ընթացքում իրականացվել են «Գնանշման հարցում» ընթացակարգով 18 չափաբաժիններով՝ 3,420.260,0 հազ. դրամ գումարի չափով և «Մեկ անձից գնում» գնման ընթացակարգով 43 չափաբաժիններով՝ 9,103.270,0 հազ. դրամ գումարի չափով կատարված գնումների գործընթացներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ.

5.2.1 «Գնանշման հարցում» ընթացակարգով ԳՀԱՊՁԲ-ԵՀԹՊՏԹ-01-19 և ԳՀԱՊՁԲ-ԵՀԹՊՏԹ-02-19 ծածկագրերով կատարված գնման ընթացքում «Պայմանագիր կնքելու որոշման մասին» հայտարարությունները Տեղեկագրում հրապարակվել են ուշացումներով: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

5.2.2 «Գնանշման հարցում» ընթացակարգով ԳՀԱՊՁԲ-ԵՀԹՊՏԹ-01-19 և ԳՀԱՊՁԲ-ԵՀԹՊՏԹ-02-19 ծածկագրերով կատարված գնման ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրությունները Տեղեկագրում հրապարակվել են ուշացումներով: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջների հետ:

5.2.3 Գնումների պլանում ընդգրկված, գնումների միասնական անվանացանկով սահմանված թվով 10 միջանցիկ ծածկագրեր չեն լրացվել 4-րդ մակարդակին համապատասխան: Առկա է անհամապատասխանություն Որոշման 1-ին հավելված 3-րդ բաժնի 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների հետ:

5.2.4 Բացակայում են գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը՝ մասնավորապես մասնակիցներին ուղարկված հրավերները: Առկա են անհամապատասխանություններ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի և Որոշման 2-րդ մասի 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

5.2.5 ՊՈԱԿ-ը 2019 թվականի տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային և համացանցային ծառայությունների մասով գնում չի հայտարարել: Շարունակել է օգտվել ծառայություններից՝ նախորդ տարիներին կնքված պայմանագրերի

հիման վրա: Առկա են անհամապատասխանություններ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ ենթակետի, 3-րդ և 4-րդ կետերի պահանջների հետ:

Հաշվեքննվողի պարզաբանումը. «... «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ը փաստել է, որ գնման ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերի հայտարարությունները, հրապարակումները, էլեկտրոնային փոստով Տեղեկագրում չարտացոլելը (այդ թվում՝ մեկ անձից գնման ձևով իրականացված), թվով 36 միջանցիկ ծածկագրերի 4-րդ մակարդակում չլրացնելը, գնումների բազային միավորը չգերազանցող գնման ընթացակարգերի շրջանակներում մասնակիցներին ուղարկվող հրավերների հիմքերի չպահպանումը, ինչպես նաև հեռախոսային և համացանցային ծառայությունների գնման գործառույթների չիրականացումները կապված են եղել տեխնիկական, անուշադրության, աշխատանքների ծանրաբեռնվածության և այլ պատճառների հետ: «Հովի. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ-ը առարկություններ չի ներկայացրել: Այնուհասանդերձ, խնդիրը ահագնանում է կազմակերպություններում համապատասխան որակավորված և փորձառու մասագետների (իրավաբաններ, հաշվապահներ և գնումների մասնագետներ) ոչ բավարար և ոչ լիարժեք ներգրավմամբ պայմանավորված ինչպես ցածր աշխատավարձերով, այնպես էլ ոլորտի առանձնահատկություններով: Հետագայում նմանատիպ խնդիրները վերացնելու նպատակով իրականացվում են հսկողական համակարգերի վերանայումներ»:

Հաշվեքննողների մեկնաբանությունը Հաշվեքննության օբյեկտը առարկություններ չի ներկայացրել, տրվել են բացատրություններ և մեկնաբանություններ:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից սույն ընթացիկ եզրակացության մեջ ներկայացված թվով 9 անհամապատասխանությունների և թվով 11 այլ փաստերի վերաբերյալ հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ, բացատրություններ և մեկնաբանություններ: Կից ներկայացվում է Նախարարության կողմից կատարողական հաշվեքննության արձանագրության վերաբերյալ պատասխան գրությունը (5 էջ):

6. Ա Ռ Ա Զ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Առաջարկվում է Նախարարությանը.

6.1 Քննարկել և լուծումներ առաջարկել Նախարարության կողմից հաստատված մշակույթի և արվեստի կազմակերպությունների կանոնադրություններով, Նախարարության

հետ կնքված դրամաշնորհային և սուբսիդիայի պայմանագրերով սահմանված Նախարարությանը ներկայացվող հաշվետվությունների տվյալների ստուգման, գործառույթների, ֆինանսական և ոչ ֆինանսական, արդյունքային ցուցանիշների ճշգրտության, իրավասության և արժանահավատության գործառույթները վերահսկելու ուղղությամբ:

6.2 Միջոցառումներ ձեռնարկել և ստեղծել այնպիսի վերահսկողական մեխանիզմներ, որոնցով կբացառվեն Նախարարության ենթակա արվեստի և մշակույթի կազմակերպությունների կողմից գնումների գործընթացների անհամապատասխանությունները:

6.3 Ներդնել վերահսկողական այնպիսի գործիքակազմեր, որոնց կիրառմամբ կվերահսկվեն Նախարարության ենթակա արվեստի և մշակույթի կազմակերպությունների աշխատակիցների կողմից ՍԷԿՏ համակարգով սահմանահատումների ժամանակահատվածներում բացակայությունները աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրերում արձանագրման աշխատանքները՝ աշխատավարձերի հաշվարկման և վճարման անհամապատասխանությունները, ինչպես նաև՝ կբացառվեն հիմնական հաստիքներով տարբեր հաստատություններում միաժամանակայա աշխատելը:

6.4 Մինչև մշակույթի և արվեստի ոլորտի օրենսդրական, իրավական կարգավորումների, առաջարկվող նոր չափորոշիչների ու վերջինիս կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակումն ու ընդունումը, առաջնորդվել գործող իրավակարգավորումների շրջանակներում առկա չափորոշիչներով:

6.5 Ձեռնարկել այնպիսի իրավակարգավորումներ և աշխատակարգեր, որոնց ներդրմամբ կկարգավորվեն ըստ աջակցության ուղղությունների և ըստ մասնագիտացված կազմակերպությունների Նախարարության Ծրագիր 5-ի ընթացակարգերը՝ կապված մրցույթների հայտագրման, անցկացման և ամփոփման կանոնակարգման, ժամկետների պահպանման, հաղթած կազմակերպություններին ֆինանսավորման, հաշվետվությունների կազմման, ներկայացման, տարեկան կտրվածքով դեբիտորական պարտքերի կրճատման և տեղեկատվության տրամադրման հարցերի բարդությունների հետ:

6.6 Հսկողություն սահմանել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվության տրամադրման ժամկետների, ամբողջականության, լիարժեքության և պահանջված ձևաչափերով տրամադրման վրա:

6.7 Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում և միջոցառման կատարման ժամանակացույց:

7. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Նախարարության Ծրագրերի 2019թ. ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	Պլան	Ճշտված պլան	Ֆինանսա- վորում	Դրամար- կղային ծախս	Փաստացի ծախս
¹	Ծրագիր 1	1,438,330.1	1,438,330.1	1,438,330.1	1,438,330.1	1,424,031.8

2	Ծրագիր 2	350,473.1	350,473.1	350,473.1	350,473.1	350,473.1
3	Ծրագիր 3	1,727,969.5	1,727,969.5	1,673,286.9	1,642,033.1	1,624,533.8
4	Ծրագիր 4	1,663,148.3	1,663,148.3	1,660,551.4	1,634,834.1	1,631,756.3
5	Ծրագիր 5	1,691,150.5	1,691,150.5	1,347,202.2	1,339,557.3	603,075.4
6	Ծրագիր 6	259,004.2	316,766.2	316,766.2	316,766.2	316,087.2
Ընդամենը՝		7,130,075.7	7,187,837.7	6,786,609.9	6,721,993.9	5,949,957.5

Հավելված 2

Նախարարության Ծրագրի 2017 / 2019թթ. ամփոփ ֆինանսական ցուցանիշներ և դինամիկա
(հազ. դրամ)

Թիվ	Ցուցանիշներ	2017 թ.	2018 թ.	2019 թ.	2018/2017 թթ. դինամիկան (+ , -)	2019/2018 թթ. դինամիկա (+ , -)	2019/2017 թթ. ընդհանուր դինամիկա (+ , -)
1	2	3	4	5	6	7	8

1	Տարեկան պլան, այդ թվում՝	5,104,251.1	5,012,185.8	6,543,685.2	-388,671.7	+1,531,499.4	+1,142,827.3
	Ծրագիր 1	1,281,934.1	1,198,608.4	1,438,330.1	-83,325.7	+ 239,721.7	+ 156,396.0
	Ծրագիր 2	312,364.6	292,060.9	350,473.1	-20,303.7	+ 58,412.2	+ 38,108.5
	Ծրագիր 3	1,532,104.0	1,439,974.6	1,727,969.5	-92,129.4	+ 287,994.9	+ 195,865.5
	Ծրագիր 4	1,486,936.6	1,383,925.1	1,663,148.3	-103,011.5	+ 279,223.2	+ 176,211.7
	Ծրագիր 5	625,848.0	531,780.0	1,104,760.0	-94,068.0	+ 572,980.0	+ 478,912.0
	Ծրագիր 6	161,670.4	165,836.8	259,004.2	+466.4	+ 93,167.4	+ 97,333.8
2	Տարեկան ճշտված պլան, այդ թվում՝	5,390,004.4	5,034,168.4	6,231,337.4	-355,836.0	+1,197,169.0	+841,333.0
	Ծրագիր 1	1,281,934.1	1,198,608.4	1,438,330.1	-83,325.7	+239,721.7	+156,396.0
	Ծրագիր 2	312,364.6	292,060.9	350,473.1	-20,303.7	+58,412.2	+38,108.5
	Ծրագիր 3	1,539,446.8	1,439,974.6	1,538,433.1	-99,472.2	+98,458.5	-1,013.7
	Ծրագիր 4	1,479,593.8	1,383,925.1	1,663,148.3	-95,668.7	+279,223.2	+183,554.5
	Ծրագիր 5	614,994.7	471,000.5	924,186.6	-143,994.2	+453,186.1	+309,191.9
	Ծրագիր 6	161,670.4	248,598.9	316,766.2	+81,928.5	+68,167.3	+155,095.8
3	Ֆինանսավորում, այդ թվում՝	5,107,431.8	4,613,943.4	5,614,167.3	-493,488.3	+1,000,221.3	+506,735.0
	Ծրագիր 1	1,281,934.1	1,198,608.4	1,438,330.1	-83,325.7	+ 239,721.7	+ 156,396.0
	Ծրագիր 2	312,364.6	292,060.9	350,473.1	-20,303.7	+ 58,412.2	+ 38,108.5
	Ծրագիր 3	1,539,446.8	1,282,027.6	1,483,750.1	-257,417.2	201,722.9	-55,694.3
	Ծրագիր 4	1,199,082.6	1,121,647.1	1,335,072.3	-77,435.5	213,425.2	+135,989.7
	Ծրագիր 5	612,933.2	471,000.5	689,775.5	-141,932.7	218,772.0	+76,839.3
	Ծրագիր 6	161,670.4	248,598.9	316,766.2	+86,928.5	+ 68,167.3	+ 155,095.8
1	2	3	4	5	6	7	8
4	Դրամարկղային ծախս, այդ թվում՝	5,104,251.1	4,608,471.0	6,216,172.9	-495,780.8	+1,607,701.9	+1,111,921.8
	Ծրագիր 1	1,281,934.1	1,198,608.4	1,438,330.1	-83,325.7	+239,721.7	+156,396.0
	Ծրագիր 2	312,364.6	292,060.9	350,473.1	-20,303.7	+58,412.2	+38,108.5
	Ծրագիր 3	1,539,446.8	1,281,027.6	1,452,496.7	-258,417.2	+171,469.1	-86,950.1
	Ծրագիր 4	1,199,082.6	1,121,647.1	1,318,549.5	-77,435.5	+196,902.4	+119,466.9
	Ծրագիր 5	609,752.6	466,528.1	1,339,557.3	-141,224.5	+873,029.2	+729,804.7
	Ծրագիր 6	161,670.4	248,598.9	316,766.2	+86,928.5	+68,167.3	+155,095.8

5	Փաստացի ծախս, այդ թվում՝	6,056,381.7	5,507,501.4	5,429,629.8	-548,880.3	-77,871.6	- 626,751.9
	Ծրագիր 1	1,281,934.1	1,198,608.4	1,438,330.1	-83,325.7	+ 239,721.7	+ 156,396.0
	Ծրագիր 2	312,364.6	292,060.9	350,473.1	-20,303.7	+ 58,412.2	+ 38,108.5
	Ծրագիր 3	1,543,030.5	1,262,880.0	1,426,429.2	-280,150.5	+ 163,549.12	-116 ,601.3
	Ծրագիր 4	1,736,193.1	1,121,878.4	1,295,234.9	-614,314.7	+ 173,356.5	- 440,958.2
	Ծրագիր 5	1,021,230.5	1,383,554.3	603,075.3	+362,323.8	-780,479.0	-418,155.2
	Ծրագիր 6	161,628.9	248,519.4	316,087.2	+86,890.5	+ 67,567.8	+ 154,458.3
6	Կատարողական (Ֆինանսավորում՝ ըստ ճշտված պլանի) (%)	94.8	91.7	90.1	- 3,1	- 1.6	- 4,7
	Ծրագիր 1	100,0	100,0	100,0	-	-	-
	Ծրագիր 2	100,0	100,0	100,0	-	-	-
	Ծրագիր 3	100,0	89,0	96,4	-11,0	+7,4	- 3,6
	Ծրագիր 4	81,0	81,0	80,3	-	-0,8	- 0,8
	Ծրագիր 5	99.7	100,0	74,6	+0,3	-25,4	- 25,1
	Ծրագիր 6	100,0	100,0	100,0	-	-	-
7	Կատարողական (Դրամարկային ծախս՝ ըստ ճշտված պլանի) (%)	98.4	98.8	98.0	+ 0.4	- 0.8	- 0.4
	Ծրագիր 1	100,0	100,0	100,0	-	-	-
	Ծրագիր 2	100,0	100,0	100,0	-	-	-
	Ծրագիր 3	100,0	89,0	96,4	-11,0	+7,4	- 3,6
	Ծրագիր 4	81,0	81,0	79,3	-	-1,8	- 1,8
	Ծրագիր 5	99,1	99,0	145,0	-0,1	+46,0	+45,9
	Ծրագիր 6	100,0	100,0	100,0	-	-	-

Հավելված 3

Նախարարության Ծրագրերի 2017-2019թթ. ոչ ֆինանսական արդյունքային չափորոշիչների վերաբերյալ

Ծրագրեր, արդյունքի չափորոշիչներ	Տարիներ	Նախատեսված	Փաստացի	Տարբերություն (+,-)
1	2	3	4	5
1. Ներկայացումների (համերգների) քանակ (հատ)				
Ծրագիր 1 «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն»	2017 թ.	90	75	- 15
	2018 թ.	100	85	- 15

ՊՈԱԿ	2019 թ.	140	93	- 47
Ծրագիր 2 «Գ. Սուեդուկյանի անվան ազգային ակադեմիական թափրոն» ՊՈԱԿ	2017 թ.	85	85	-
	2018 թ.	85	90	+ 5
	2019 թ.	120	118	- 2
	2017 թ.	1049	1272	+ 223
Ծրագիր 3 (Թվով 14 թափրոններ)	2018 թ.	1220	1294	+ 74
	2019 թ.	1040	1231	+ 191
	2017 թ.	421	651	+ 230
Ծրագիր 4 (Թվով 12 համայնություններ)	2018 թ.	489	624	+ 135
	2019 թ.	486	519	+ 33
	2017 թ.	10	13	+ 3
Ծրագիր 6 «Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ	2018 թ.	10	15	+ 5
	2019 թ.	10	13	+ 3
	2017 թ.	1655	2096	+ 441
Ընդամենը՝ ներկայացումների (համերգների) քանակ (հափ)	2018 թ.	1904	2106	+ 202
	2019 թ.	1796	1974	+ 178
2. Հանդիսատեսի թվաքանակ (մարդ)				
Ծրագիր 1 «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թափրոն» ՊՈԱԿ	2017 թ.	52569	52887	+318
	2018 թ.	58410	42999	-15411
	2019 թ.	81774	53598	-28176
Ծրագիր 2 «Գ. Սուեդուկյանի անվան ազգային ակադեմիական թափրոն» ՊՈԱԿ	2017 թ.	35000	37118	+2118
	2018 թ.	27118	36240	+9122
	2019 թ.	49563	47531	-2032
1	2	3	4	5
Ծրագիր 3 (Թվով 14 թափրոններ)	2017 թ.	354537	421689	+ 67152
	2018 թ.	382236	399036	+ 16800
	2019 թ.	329967	364015	+ 34048
Ծրագիր 4 (Թվով 12 համայնություններ)	2017 թ.	123565	211908	+ 88343
	2018 թ.	148630	202409	+ 53779

	2019 թ.	148264	195380	+ 47116
Ծրագիր 6 «Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ	2017 թ.	7310	11370	+4060
	2018 թ.	7310	10990	+3680
	2019 թ.	7310	10950	+3640
Ընդամենը՝ հանդիսարեսի թվաքանակ (մարդ)	2017 թ.	572981	734972	+161991
	2018 թ.	623704	691674	+67970
	2019 թ.	616878	671474	+54596
3. Նոր ներկայացումների (նոր համերգային համարներ) քանակ (հատ)				
Ծրագիր 1 «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ	2017 թ.	2	4	+ 2
	2018 թ.	3	6	+ 3
	2019 թ.	3	6	+ 3
Ծրագիր 2 «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ	2017 թ.	3	4	+ 1
	2018 թ.	3	2	- 1
	2019 թ.	3	3	-
Ծրագիր 3 (Թվով 14 թատրոններ)	2017 թ.	43	49	+ 6
	2018 թ.	45	48	+ 3
	2019 թ.	46	62	+ 16
Ծրագիր 4 (Թվով 12 համույթներ)	2017 թ.	20	23	+ 3
	2018 թ.	20	62	+ 42
	2019 թ.	20	26	+ 6
Ընդամենը նոր ներկայացումների (նոր համերգային համարներ) քանակ (հատ)	2017 թ.	68	80	+ 12
	2018 թ.	71	118	+ 47
	2019 թ.	72	97	+ 25
1	2	3	4	5
4. Դահլիճի միջին բեռնվածություն (տոկոս)				
Ծրագիր 1 «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ	2017 թ.	55,0	66,4	+11,4
	2018 թ.	55,0	55,4	+0,4
	2019 թ.	55,0	54,0	-1,0
Ծրագիր 2	2017 թ.	55,0	67,1	+12.1

«Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ	2018 թ.	55,0	55,0	--
	2019 թ.	55,0	55,0	--
Ծրագիր 3 (Թվով 14 թատրոններ)	2017 թ.	67,4	69,1	+1.7
	2018 թ.	65,3	58,3	-7.0
	2019 թ.	68,9	60,2	-8.7
Ծրագիր 4 (Թվով 12 համայնքներ)	2017 թ.	63,0	91,6	+28.7
	2018 թ.	63,9	107,4	+43.5
	2019 թ.	68,7	101,4	+32.8
Ծրագիր 6 «Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ	2017 թ.	55,0	67,1	--
	2018 թ.	55,0	55,0	--
	2019 թ.	55,0	55,0	--
Ընդամենը՝ դահլիճի միջին բեռնվածություն (տոկոս)	2017 թ.	55,0	55,0	-
	2018 թ.	55,0	55,0	-
	2019 թ.	55,0	55,0	-
5 Դպրոցական ֆիլիարմոնիայի գործունեություն Երևանում, մարզերում, համերգ-դասախոսությունների քանակ (հատ)				
Ծրագիր 4 (Թվով 12 համայնքներ)	2017 թ.	25	47	+22
	2018 թ.	25	47	+22
	2019 թ.	40	46	+ 6

Հավելված 4

Նախարարության Ծրագրի աշխատակիցների 2019թ. ընթացքում ՀՀ-ից բացակայելու վերաբերյալ

Թիվ	Հանրապետությունից բացակայող	Բացակայած աշխատանքային	Հաշվարկված աշխատավարձ՝
-----	-----------------------------	------------------------	------------------------

	Նախարարության արվեստի և մշակույթի կազմակերպություններ	Աշխատակիցների թիվը (մարդ)	Դեպքերի (տողերի) քանակը (մարդ X տող)	օրերի ընդհանուր քանակը (օր)	բացակայած օրերի համար (ՀՀ դրամ)
1	2	3	4	5	6
1	«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ	157	339	1735	15,472,770.0
2	«Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ	19	25	184	1,339,469.3
3	«Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ	33	44	247	1,138,774.1
4	«Կ.Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ	38	52	344	2,176,446.2
5	«Գյումրու Վ.Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ	6	6	28	164,381.0
6	«Վանաձորի Հ.Աբեյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ	10	11	47	227,634.6
7	«Երևանի Հ.Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ	20	37	128	702,184.3
8	«Երևանի խամաճիկների պետական թատրոն» ՊՈԱԿ	3	3	6	46,342.9
9	«Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ	40	90	774	4,287,744.0
10	Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» ՊՈԱԿ	8	11	113	569,767.1
11	«Երևանի մնջախաղի պետական թատրոն» ՊՈԱԿ	9	10	42	226,876.4
12	«Արտաշատի Ա.Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ	2	2	17	78,725.3
13	«Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն» ՊՈԱԿ	17	43	193	1,504,547.9
14	Գորիսի Վ.Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ	3	3	24	78,847.8
15	«Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ	90	137	775	5,126,330.9
16	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ	46	69	310	2,056,466.9
1	2	3	4	5	6
17	«Հայաստանի պետական ֆիլհարմոնիա» ՊՈԱԿ	36	75	414	1,674,141.9
18	«Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետական համույթ» ՊՈԱԿ	9	9	66	326,341.0
19	«Հայաստանի պարի պետական անսամբլ» ՊՈԱԿ	18	34	225	1,192,539.5

20	«Հայաստանի պարավեստի «Բարեկամություն» պետական համույթ» ՊՈԱԿ	7	7	68	363,099.0
21	«Հայաստանի էստրադային ջազ նվագախումբ» ՊՈԱԿ	19	38	372	1,864,083.3
22	«Հայաստանի երգի պետական թատրոն» ՊՈԱԿ	6	6	39	201,149.7
23	«Պետական կամերային երաժշտական թատրոն» ՊՈԱԿ	10	12	52	289,912.9
24	«Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ	32	47	249	1,662,591.8
Ընդամենը՝		638	1110	6452	42,771,167.8

Հավելված 5

Նախարարության Ծրագրի 2019թ. արվեստի և մշակույթի կազմակերպություններում
միաժամանակ հիմնական հաստիքով աշխատողների վերաբերյալ

Թիվ	Աշխատողների հաստիքները	Արվեստի և մշակույթի կազմակերպություններ
1	2	3
	Ֆելետա-կոնցերտմայստեր	«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն»

1		ՊՈԱԿ
	Երգիչ	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
2	Գնումների համակարգող (0.5 դրոյթ)	«Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ
	Տնտեսագետ	«Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
	Տնտեսագետ	«Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ
3	Նվագախմբի երաժիշտ	«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ
	Երգիչ	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
4	Բեմի առաջատար վարպետ	«Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ
	Գլխավոր ռեժիսոր	«Երևանի խամաճիկների պետական թատրոն» ՊՈԱԿ
5	Հաշվապահ	«Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետ. համույթ» ՊՈԱԿ
	Հաշվապահ	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
	գլխավոր հաշվապահ	«Հայաստանի երգի պետական թատրոն» ՊՈԱԿ
	Նվագախմբի երաժիշտ	«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ
6	Երաժիշտ	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
	Նվագախմբի արտիստ	«Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ
7	Իրավաբան	«Երևանի Հովի. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ
	Գնումների համակարգող	«Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն» ՊՈԱԿ
	Բարձր կարգի դերասան	«Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ
8	Տնօրեն	«Կ.Ս.Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ
	Երգիչ	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
9	Երգչախմբի առաջին կարգի արտիստ	«Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ
	երգչախմբի երգիչ (բաս)	«Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ
10	Ռեկվիզիտոր	«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ
	Բեմադրական մասի վարիչ	«Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն» ՊՈԱԿ
11	Մասնաճյուղի ղեկավար	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
	Փոխտնօրեն	Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
	Առաջին կարգի մեներգիչ	«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ
12	Երաժիշտ	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
	երգչախմբի երգչուհի (սոպրանո)	«Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ
13	Ադմինիստրատոր	«Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետ. համույթ» ՊՈԱԿ
	Տնտեսագետ	«Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ
	Տնտեսագետ	«Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
1	2	3
14	Գնումների գծով համակարգող	«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ
	Հաշվապահ	«Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետ. համույթ» ՊՈԱԿ
15	Նվագախմբի երաժիշտ	«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ

Փոխտնօրեն	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
16 Հնչյունային օպերատորի ասիստենտ (0,5 դրույք)	«Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ
Ձայնահնչյունային օպերատոր	«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ
Տնօրենի տեղակալ տնտեսական և տեխնիկական գծով	«Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն» ՊՈԱԿ
17 Բարձր կարգի մեներգիչ	«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ
Երգիչ	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Երգչախմբի երգիչ (տենոր)	Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ